

սեղ՝ թէ տասնեակ դարերէ ի վեր հայու-  
թեան մէջ մկրտութեան համար դործած-  
ուած են երկու բանաձեւեր:

Ա) Այս անուն մկրտի յանուն Հօր եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. զնեալ ա-  
րեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մե-  
ղաց, ընդունելով (կամ եւ ընդունի) դա-  
ստութիւնն որդեգրութեան Հօրդ (կամ  
Հօրն) երկնաւորի, լեալ ժառանգակից  
Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն սրբոյ:

Բ) Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ  
կամաւ յերախայութիւն, յերախայութե-  
նէ ի մկրտութիւն, մկրտի այժմ ի ձեռս  
իմ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
սրբոյ. զնեալ արեամբն...»:

Թ-ԺԵ դարերուն՝ այս բանաձեւերէն  
միայն առաջինը դործածուած է, եւ երբ  
ԺԵ. դարէն վերջ երեւան ելած է երկրոր-  
դը, առաջինը զեռ շարունակուած է դոր-  
ծածուիլ մինչեւ մեր օրերը:

Երկրորդ բանաձեւը սկսած է դործած-  
ուիլ ԺԵ. դարէն ետք, եւ երթալով աւե-  
լի ընդհանրացած է, մանաւանդ ԺԶ. դա-  
րուն:

Այս երկու բանաձեւերէն դուրս՝ ու-  
րիշ տիւրող ձեւ մը դոյութիւն չէ ունե-  
ցած. սակայն երկուքին խառնուրդէն  
կազմուած են ուրիշներ՝ առանց տիրե-  
լու:

Մեր այս համառօտ տեսութիւնը փա-  
կելէ առաջ, կ'ուզենք դործնական եղբա-  
կացութիւն մըն ալ հանել:

Ներկայիս հայութեան մէջ դործած-  
ուած գլխաւոր Մաշտոցները երկուք են.  
մին հայ կաթողիկէ համայնքինը եւ եր-  
կրորդը հայ առաքելական եկեղեցիինը:

Կաթողիկէ համայնքի Մաշտոցի սլաշ-  
տօնական հրատարակութիւնը կատար-  
ուած է Վիեննա, 1880ին: Միշտ հիմ առ-  
նելով ձեռագիրներու բնագիրներն ու  
խորագիրները, կը տեսնենք թէ այս հրա-

տարակութեան մէջ՝ կատարուած են ինչ  
ինչ շեղումներ, մանաւանդ խորագիրնե-  
րու մէջ. սակայն մեր նպատակէն դուրս  
է ծանրանալ անոնց վրայ: Վիեննայի  
Մաշտոցի մկրտութեան բանաձեւը հետե-  
ւեալն է. «Ծառայա կամ աղախինս այս ա-  
նուն մկրտի ի ձեռս իմ յանուն Հօր եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»<sup>25</sup>: Աւելորդ կը  
համարինք խորհրդածութիւններ կատա-  
րել այս բանաձեւին մասին. ընթերցողը  
ինքնաբերաբար պիտի տեսնէ թէ ընդ-  
հանրացած առաջին բանաձեւին մէջ ներ-  
մուծուած են «ծառայա կամ աղախինս» եւ  
«ի ձեռս իմ» բառերը. այնպէս որ եթէ  
այդ յաւելումները վերցունք, կ'ունենանք  
հարազատ հնադոյն բանաձեւը: Իսկ եթէ  
ուզենք անպատճառ սլաշել զանոնք, լա-  
ւազոյն է զեռ քանի մը յաւելումներ եւս  
կատարելով՝ որդեգրել երկրորդ բանա-  
ձեւը, ինչպէս որ ձեռագիրները մեզի կ'ա-  
ւանդեն:

Այս տեսակէտով՝ շատ լաւ ընտրութիւն  
կատարած է 1840ին՝ Վենետիկ տպուած  
Մաշտոցը, որ զարմանալի սրատեսու-  
թեամբ դրած եւ բնագիրն մէջ անցուցած  
է երկրորդ բանաձեւը, առանց ստորակէտ  
մ'իսկ փոխելու:

Հայ առաքելական եկեղեցւոյ դործա-  
ծած Մաշտոցի վերջին հրատարակութիւ-  
նը ունինք մեր արամադրութեան, արպ-  
ուած Երուսաղէմ 1961ին, որ կը կիրար-  
կուի նաեւ Կիլիկիան թեմերու մէջ: Հոն  
մկրտութեան բանաձեւը հետեւեալն է.  
«Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ յե-  
րախայութենէ ի մկրտութիւն, մկրտի  
յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբ-  
ոյ...»<sup>26</sup>: Բանաձեւ մը՝ որ թէեւ կը մօ-  
տենայ երկրորդ ձեւին, սակայն խանգար-  
ուած ու անկատար է. քանի մը փոքրիկ  
յաւելումներ եւս կատարելով՝ կրնանք ու-  
նենալ երկրորդ բանաձեւը, իր ամբողջու-  
թեամբ: Մեծապէս մաղթելի պիտի ըլլար  
որ համաձայնութիւն մը գոյանար, եւ  
ընդհանրաբար դարերով ընդունուած ու  
կիրարկուած միեւնոյն բանաձեւը:

Հ. ՍԱՀԱԿ ԶԵՄՃԵՄԵԱՆ

## ՆՈՐ ՆԻԻԹԵՐ

### ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԵՕՄԻԻՐՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

(Շար. տե'ս «Բազմալեզու» 1967, ք. 3-5, էջ 88)

Ե.

Վերոյիշեալ զրչադրին մէջ, կը գտնուի  
նաեւ Երեմիայի մէկ ուրիշ վկայասանու-  
թիւնը, որ ծանօթ է Հ. Ն. Ակինեանի.  
«Վասն էքմէքճի առնառա Տիմոյի ու-  
մեմն, որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մըր-  
դատայ անուն»: Ողբացեալ Հայրը կը  
ծանօթագրէ թէ վէպս ծանօթ է միայն ե-  
րեք ձեռագիրներով եւ չորրորդի մը մա-  
սին ալ կը խօսի ծանօթագրութեամբ  
1897ի Բազմալեզուն, էջ 424:

Յիշուած զրչադրներէն մին Երեւանի  
Թանգարանի թիւ 386ն է, նախկին ձե-  
ռագիր Լ. Բայրուրթեանի, յԱխալցխա,  
ուրիշ անցեր է Մատենադարան: Սակայն  
Մատենադարանի թիւ 386ը չունի ատի-  
կա. այլ կը գտնենք թիւ 1456ին մէջ, որ  
նշանակուած է իբր ԺԶ. դարու, հայա-  
տառ թուրքերէն: Կ'երեւի թէ Հ. Ակի-  
նեան ձեռագիրը տեսած էր Երեւանի  
Թանգարանը՝ Արովեան փողոցին վրայ,  
ուրիշ ձեռագիրը փոխադրուեցաւ Մատե-  
նադարան, ստացաւ նոր թիւ եւ եղաւ թիւ  
1456: Մատենադարանին ցուցակէն որոշ  
չէ թէ «Պատմութիւն Տիմոյի» նոյնպէս  
հայատառ թուրքերէն է:

Հ. Ակինեան Երուսաղէմի զրչադրնե-  
րուն մէջ երկու հատ կը յիշէ այս վէպը  
պարունակող: Թիւ 959 կ'երեւի թէ ող-  
բացեալ հօր ուշադրութեան չէ արժանա-  
ցած, հաւանաբար նոր ըլլալուն համար.  
իսկ թիւ 605ը օգտագործած է, միշտ իբր  
1671էն զրչութիւն նշանակելով: Սակայն  
այս 1671 թուականը զրչութեան թուա-

կանը չէ, ինչպէս որ յիշատակարանն ալ  
ցոյց կու տայ. այլ 1671ը քուականն է  
ստացողին Բահաւայանալուն, եւ կը յիշ-  
ուի ստացողին կենսագրութեան առն-  
չութեամբ: Կը խորհիմ որ զրչադրը, որ  
զանազան մասերէ կը բաղկանայ, 1671էն  
շատ աւելի վերջը գրուած եւ ստացողին՝  
Տիգրանակերտցի Գրիգոր վարդապետին  
ձեռքը անցած ըլլայ: Հաւանաբար ողջ էր  
ան զեռ 1709ին, երբ կը յիշուի 200 ոսկի  
նուիրատութեամբ, վանքին պարտքերը  
լատնալու համար:

Այսպէս, ուրեմն, հնադոյն օրինակը իմ  
հաւաքմանս թիւ 44 ձեռագիրն է, անտա-  
րակոյս Երեմիայէն իսկ գրուած: Ասկէ  
տոնելով՝ կը հրատարակենք իր այս վի-  
պասանութիւնը, առաջին անգամ ըլլալով  
հոս մեր զրչականութեան մէջ, լոկ պար-  
զելով սղագրութիւնները:

Գէշ ներկուած եւ ջուրով խաթարուած  
գուեղեղ խորանի մը անմիջապէս տա-  
կէն կը սկսի, առանց խորագրի:

Է եւ այս խորհուրդ մեծ իմն հրաշալին,  
Որդոյն Մարմայ եւ Հօր անդին,  
Որ յամենայն ժամ մեծութիւն յայտնին,  
Ըստ այնմ երկինք պատմեն զիստ աստուածային:

Բամեալ վերյիշեալ յառաջին ճառին,  
Չղտամութիւն սղծոյ անդիփոփողին.  
Չխոյտտաակութիւն կէտի կէտին.  
Ընդ հանուր յաշխարհ որ ի սոյն դարին:

Եղեն եւ հրեայք ի խոր տրամութիւն,  
Այնք որ խնդայինն սպաշաւէին.  
Մաքառողք ընդ մեզ շատ ամաչէին.  
Եւ ոսմկաց լինէր սրտի բեկութիւն:

25. Մաշտոց Հայաստանեայց ուղղափառ եկեղեց-  
ւոյ, Վիեննա, 1880, էջ 18:

26. Մաշտոց կամ ծխաբան, Երուսաղէմ, 1961,  
էջ 46:

Մամոնայս եւ զինչսըն կըսկծային  
Որ ի յերթեւեկս նորա ծախէին,  
Ձաղկերուեալ զընծայսն ախոսոյին,  
Ըզծանակն լինելն նեղասրտէին:

Ինչպէս ժամանակ որ այս մեղ զիպին  
Որ զիւրեաւ զիջանք այն անըզգամին,  
Ձմեր պաշտօն առնել կամէր յիւր մօխն,  
Յինչ զարձաւ ժպիր՝ ծնունդըն նեոխն:

Այս բազում աղմուկն լինէր առ նոսին,  
Թերեհաւատեալք շատ մոլորէին,  
Ամ յամէ յայլ վայրս եւ որք յաստ կային,  
Դարձեալ յորինացն տաճիկ լինէին:

Ձայն ոմանք տաճիկ չեղեւ ասէին,  
Սիրան եւ խորհուրդն է ի մեր յորինին.  
Կերպարանեալն է արդ որ երեւին,  
Ձնոյն փրկիչ յուսամբ զմարդըն ներքին:

Ի դալ սրամանին յայտնեցի կրկին.  
Գոյ ժամ ժամանակ զի երեւեցին,  
Մինչ այս կրակօքս հաշեալ մաշէին,  
Եւ Քրիստոս կրկին որ այժմիկ պատմին:

(Կարմրաւ): Վասն էփէփնի առնաւուտ Տիմոյի  
ււմեմն. Որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մրգատա  
աւնուն: Եւ սուրբ խորհրդով քարոզէ նմայ գփրիս-  
սոս: Եւ աղջիկն խոստանայ երբալ ընդ նմայ ուր  
եւ կամիցի մանուկն:

Յիստամալօլ քաղաք զուստր ոմն հրէի,  
Որ էր բնակեալ ի զբան Ֆէնէոի,  
Արաաբոյ զբրան նոյն խակէլէի,  
Յեղերբս ծալուն որ եալի կոչի:

Էր անդ հացի ծախ ի դուռն զոր ասի.  
Յոյն դաւանութեամբ աղբ առնաւուտի,  
Ասոյք հասակաւ ի մանկական տի,  
Որոյ եւ անունըն Տիմօ կոչի:

Սա տայր հաց ի ծախ ի տունըս հրէի,  
Գոլ ծանոթանալ նոյն Տալիթայի.  
Իրբու կատականս սիրոյ աղաղի,  
Յերարս լինէին միշտ ի զրուցի:

Որոջըն հրէի արթնացեալ յողի,  
Վառելով ի սէր յունաց կտրջի,  
Խօսին զմայլին ի սէր աւելի,  
Որ միշտ երթեւեկ ի տունըն լինի:

Իսկ մայր աղջրկան ասէր Տիմոյին,  
Թէ այդքան սէր քո որ ի մեղ վառի,  
Լիջիւր հրեայ ի մերս յօրինի.  
Քեզ զբանչ լինիմ դուստր իմ կին քեզի:

Ունին եղեալ եւ դուստրն մօրըն իւր բանի.  
Առաւել հարեալ ի սէր տարվալի.  
Եւ եւս ցՏիմօն ինքն համարձակի.  
Ասէր քեզ լիցիմ եւ դու իսկ ինձի:

Ճուղաղ տայ Տիմօն այ իմ սիրելի.  
Ոչ ոք է լըւեալ դայս յաւեստին,  
Թէ քրիստոնեայ որ հրեայ լինի,  
Ձլոյսըն փոխարկէ ի զարչ խաւարի:

Քանզի փոփրկայք դասք տեսանողի.  
Համայնք զրեցին սակս Մեսիայի.  
Թէ դայ եւ առնու զընտելիւնս մեր նախնի.  
Մարբեալ սրբեցէ արեամբն իւր ձըրի:

Տես զի մինչ ցայսօր աղղըն ձեր հայի,  
Ակն արկեալ զգալուստըն Մեսիայի,  
Մուրեալ մնացին ի խոր խաւարի.  
Խարեալ սուտ արանց կան ալլայլելի:

Լոյսն է հաւատն իմ փրկչին Յիսուսի.  
Որ ի խաչ նորա եւ հաւատացի.  
Որ աղբ եւ աղինք զնայ խոստովանի.  
Թաղաւորք չիշխանք մինչեւ ցօրս յայտնի:

Տես զի դուք հանուրց եղայք զարչելի.  
Որ ամենայն աղբ նալլէթ տան ձեզի.  
Դու ինձ խոստացիր զհաւատն Յիսուսի.  
Որ լոյս տուեալ ինձ տայ եւ լոյս քեզի:

Լեր դու ինձ այսօր ըստուղ խոստովան,  
Եղիր դու յօրէնս իմում քրիստիան,  
Մկրտեալ լիջիւր յանուն յիսուսեան,  
Ես քեզի լինիմ դու ինձ սիրական:

Մրգատան սիրով ասէ Տիմոյին.  
Թէ բարի ասես զբանդ այդ սիրաղին.  
Բայց պակասաւոր սրպէս լինիցիմ.  
Ըզմեծ զործդ առնել եւ իմոյս անձին:

Ազգն իմ զիս սպանէ յոյժ ողորմաղին.  
Եւ զքեզ ոչ թողուն կենացըդ բաժին.  
Ոչ զքեզ ողջ թողուն եւ ոչ զիմ անձին.  
Այլ կորուստ յայսմիկ զինչ օգուտ լիցին:

Ասէ եւ Տիմօն իւր Մրգատային.  
Միայն զսիրաղ ուղղեալ քո ստեղծողին.  
Դու ինձ խոստացիր զհաւատն Յիսուսին.  
Հնարեցուք երթալ ի յերկիր բարին:

Ասէ Մրգատան թէ սրպէս փախչիմք.  
Որ ի ճանապարհ ումեք չհանդիպիմք.  
Գուցէ զինի մեր խնդրողք անկանին.  
Յեախն չար լինի մեր քան զառաջին:

Մինչ յայս խորհրդեան հանապաղ կային.  
Եւ օր ըստ օրէ ի սէր յաւելուին.  
Փախչելոյ հընարս առնել փութային.  
Դիպուկ ժամ ուրուք օգնելոյ մնային:

Աւրնթէր միմեանց սեղան նստէին,  
Ի գէմս զրոշմեալ զնշան սուրբ խաչին.  
Ձոմանս կատականս զոմն ստուգէին.  
Գովելով Տիմօն զհաւատն Յիսուսին:

Աչք Մրգատային յերես Տիմոյին.  
Անթարթ լանդաղար յիրարս դիտէին.  
Ճօճել ճաղկատալըն Մրգատային.  
Լինէր հոգեհան խիստ խիստ Տիմոյին

(Կարմրաւ): Վասն քղքի քարեկամաց Տիմոյին որ  
կային ի Յուլահ, որ ումեմ ասեմ քէ եղբայրն է:

Տիմոյին մարդ կայր ի յերկիր Ուլահ.  
Ոմանք մեծամեծք զործ յիշխանութեան.  
Գրեալ Տիմոյի նստելդ այդր ունայն.  
Պանդուխտ յաշխարհիդ յերկիր տաճկաստան:

Այլք զան առ ի մեղ մարմնով զուարճանան.  
Հողով ցնծացեալ յերկիրս քրիստիան.  
Ձկնեցաղս վայելեն ի հանդատութեան.  
Կցորդ լեալ փառաց մեր վայելչութեան:

Դու ես առ ի մեղ իրր զոմն օտարական.  
Կաս սրպէս թէ ոչ ի մտաց մեր սահման.  
Օհարք լընտանիք մեղ ծանօթացան.  
Կարօտ մեք առ քեզ դու մեղ խորթանման:

Միթէ չկայ աստ զործ արհեստիդ նըման,  
Ձիցեմք մեք քան քո վարպետիդ նըման,  
Յարկ մեր հանդստեան տեղ եւ ապարան.  
Լայրբդ փոշոտ լոջլոտ բարուց քոց նըման:

Սթափեաց ի զինոյդ մանուկ մուլական.  
Ձգտատացիր եւ ել յերկրէդ տաճկաստան.  
Առ մեղ եկ սրտիւ քո յօժարական.  
Ողջ լիցիս տերամբ ի սոյն արթնութեան:

(Կարմրաւ): Վասն ողբաղին տխրութեան Տիմո-  
յին: Եւ գրելոյ զպատահմունս իւր որ ի յաղջկա-  
նէն առաքելով ի յուլահ եղբարց իւրոց:

Լուեալ դայս Տիմօն ի լաց ելանէ.  
Ողբոյ զանաղին խորոց հառաչէ.  
Ասէ զոր զրեալ են ինձ խիստ արժան է.  
Յիմացս օտար կամ անձն իմ կարօտ է:

Ձէ ժամ ժամանակ զերիս զինչ առնէ.  
Որ դստեր հրէին սիրտ իմ հարեալ է.  
Աչք նորա զմարմին հօգիս կու մաշէ,  
Վայ զզլուխս պատեաց որ ելն անհուն է:

Գրեմ իմս զլիոցդ որ ինձ պարծանք է,  
Պարոն եղբարցդ իմ ի յաղնիւ տոհմէ,  
Պատուեալ զործակալք ի յաղատ աղղէ.  
Ոտից ձեր համբոյր ի նուաստէս հասցէ:

Գիր ձեր մեծութեանցդ քան որ հասեալ է.  
Աչք իմ արտասուաց ոչ դադարեալ է.  
Ձինչ որ զրեցիք ինձ այլ աւել է.  
Անցանք իմ անբախտ էյանդիտութենէ:

Իրաւ որ զփառս ձեր օտարն վայելէ.  
Հացի է հասեալ կենօքն ուրախ է.  
Հալաւս իմ կեղտոտ ապայ քէպէ է.  
Թէ փորովս հացիկ ծեծով փետով է:

Թող որ մատուցք իմ չհամարձակէ.  
Գրելս մեծութեանցդ սիրտ իմ սասանէ.  
Որ մուլական ախտն զիս ըմբռնեալ է.  
Ի դուռս մի հրէի կանդնեցուցեալ է:

Առ այս փորձանաց որ զիպեալ եղէ.  
Օր աւուր եւ այն առաւել աճէ.  
Եւ նորա պըտուղն կամ կեանք կամ մահ է.  
Ի յերկուցըս մինն լինել խիստ մերձ է:

Ասէր սիրական սիրտ իմ պրկեալ է.  
Որ այժմ եւ յաւէտ ոչ ոք լուեալ չէ.  
Եւ այն առ դստեր զարչ հրեայի է,  
Ձեզ խոստովանիմ որ մեծ փորձանք է:

Աղուոր պատկեր է որ մարդ տեսեալ չէ.  
Գողցըր լեզու է որ լսելու չէ.  
Բարք նազելի է որ ասելու չէ,  
Աչքն է հաց յաղթող որ պատմելու չէ:

Թէ յաշս համայնից որ զարչ հրեայ է.  
Ձգիտեմ թէ ինձ այսպէս որ երեւեալ է.  
Ձգիտեմ թէ որպիսի հուր ինձ վառեալ է.  
Առանց չուան լերկաթ զիս պինդ կապեալ է:

Ո՞րպէս կարացից մերժիլ ի նմանէ.  
Ո՞րպէս դատեցայց զնորայն տեսլին.  
Ո՞ր զոն մոռացայց զսէրն որ անհուն է,  
Որ ճառելու չէ ոչ պատմելու է:

Պատուելի պարոն արդ իրաւող զինչ է.  
Ձի եղբոր խրատ յոյժ օգտակար է.  
Ձսէր նորա ասեմ որ հուր բորբոք է.  
Ձկուշումդ քո ահա ինձ կրկին վիշտ է:

Թուղթ ձեր կրսերիդ որ առ ձեզ հասցէ.  
Խրատ ձեր արաղ ինձ ժամանեցէ.  
Ձի հանց արարից սրպէս հրաման է.  
Այս բաւ մեծութեանցդ ողջ լիջիք ի Տեառնէ:

(Կարմրաւ): Վասն պատասխանոյ եղբոր Տիմոյին փութով առաքեալ յիստամպոյ միտքարեալ զնայ յուսադրական բանիւ: Եւ քաջալերէ երբաւ ի յիւստանալով ընդ իւր զաղջիկն հրէին:

Եհան թուղթս փութով յաշխարհ Ուլահայ: Եղբոր Տիմոյին որ արդէն էր նայ: Լըցեալ խնդութեամբ եւ ուրախանայ: Զգարձ թղթին դրէն որ օրինակս կայ:

Տիմո եղբորդ իմ ողջոյն այս սլացի: Իրդ որ քեզ դիպեալ Տեսանէ զիտասցի: Ամօթ չէ մարդոյ որ փորձանք դիպի: Ի հոգմոյն չհարժեալ ցոյց ինձ ծառ յերկրի:

Անմեղ ւանսխալ բեր մարդ մի ինձի: Անարատ կենօք ւոչ սէր ի սրտի: Պղտոր է հասակն երիտասարդի, Թող զարիւղ լինօղն կարօտ ամէնի:

Թող որ եւ մատաղ աղջիկ է հրեայն: Յաջրս քո անկեալ զեղըն քարշական: Հանդէպ աչաց քոց լինել ճօճական, Հարեալ սէրն ի սրտիդ յանկարծ տարփական:

. . . . .

(Ասկէ վերջ գրչագրին մէջ հաւանաբար բերք մը ինկած, պատուած, կը պակսի: որով վիպասա-նութենէն տասը տուն մը պակաս է հոս):

Եւ ի կառն նստաւ յօժարեալ սրտին: Բայց արտօսն յաչացն առաւ հոսէին: Զի այս ո՞րպէս գործ նրմայ հանդիպին, Ընդ յօտարս երթալ ի յօտարութիւն:

Աղէ սակս յուսոյ անմահ արքային: Որ կաթեալ ի սիրան առթիւ Տիմոյին: Ա՛յ Անդօնիայ ձեռք քո օղնեցին, Ասէր լեր դու ընդ մեզ ի ճանապարհին:

Սրբընթաց ձիովքն որ ճամբայ մտին: Աւուրբք ինչ ըզգես Տանաւիս անցին: Տաճիկ աշխարհաց ըզսինօն անցին: Ի քրիստոնէից յերկրըն հասին:

Պարոնքն կանգնեալ կնքահայր նոցին: Մեծաւ հանդիսիւ զնա մկրտեցին: Փառօք հարսանեօք խտրիֆանեցին: Զնոր հարսն եւ փեսայն օժտօք ոռնկեցին:

(Կարմրաւ): Վասն խոնավութեան հրէից եւ բո-ղոք բարձեալ առ քոնակալս բազումք զհետ նոցա անկան ի նամակարի: ոչ հասին եւ դարձան յետս: Եւ երգեցողք ձաղանս հրէից ոտաշարէին:

Լուր դու զնա տարածըն հրէից աղջին: Թէ զինչ գործեցաւ ի նոյն սահմանին: Հրեայքն առ ի մայրն ի հարցմունք ելին: Տեսին զի ողբայր եւ լայր դառնաղին:

Նստէր զրացեօք եւ իւր աղբայնօք: Լալական պառօք զուսան ողբերգօք: Անիծեն զՏիմօն պէսպէս նզովիւք, Զօր ծննդեան նորա յոյժ անարդանօք:

Յոյժ անմխիթար լային կոծելով: Լերամբ եւ դաշտով ծովով ցամաքով: Երկնով եւ երկրով ձորով սարերով, Քան զողբն երեմիայ առաւել ցաւով:

Հրեայքն ի խնդիր որ ի մայրն եկին: Ասեն ի դուր է կոծ ձեր տրամադին: Ելցուք ի սահմանն ծովեղբրին: Յուզեցուք ի տունն յունական աղջին:

Աղբ առնեն իսկոյն զայս զայմախամին: Որ նա յանձնէ առ ի մեծ սուպալին, Վրէժխնդիր լեալ պօստանձի պաշին: Խուզեն ւորոնեն ի սոյն սահմանին:

Զեղեւ գտանել ըզհեռաւ նոցին: Թէ ընդ որ ճանապարհ անցեալ զնացին: Ըզրազում հոռոմս կալեալ կապէին: Զաղջիկըն տանողք զուրցէ գտանիցին:

Զտանող նաւաւարն հաղիւ որ գտին: Որ զնոսա եհան յեղբր քաղաքին: Կալան ի բանտի չի տանջանալ արկին, Իսկ նա ի յուրաստ զնոցանէն լինի:

Ասէր փուռ զինուք առ իս որ եկին: Զինքեանն տաճիկ սուրհանդակ տաին: Երկեայ դառնաղոյն տեսլենէ նոցին: Առեալ եւ հանի յեղբր քաղաքին:

Թողին զնա ի բաց եւ զայլս խնդրէին: Ի համայն ազգաց ի դրան Ֆէնէսին: Եւ տեղեկացան զտանել Տիմոյին: Զմուտ եւ զել ունեն առ դստեր հրէին:

Բողոքեն ազգօք ի հրապարակի: Ասեն չէ եղեալ այս ի սոյն թախթի: Մեզ հարկատուաց մեծ թաղաւորի: Անիրաւութեանս այսմօ՞վ լուռ լիցի:

Կոտորիմք ազգօք ի սուր սուսերի: Թէ աղջիկըն մեր ի գլուս ոչ լիցի: Թող բաժին լինի այն տաճիկ ազգի: Եւ մի թշնամեաց մեր քրիստոնէի:

Լուան զայս աղինք ի սոյն քաղաքի: Նախատինքս տան հրէից աղջի: Մոռացան այսու ըզիկէտի կէտին: Արդ զաղջիկն ջհտին ընդ առնաւուտի:

Տարաւ առնաւուտ զաղջիկըն ջհտի: Հեծոյց յերիվար առնել ըզիկի: Հոռոմք փեսաւերք եղեն հրէի: Փեսայ առնաւուտ յոյնք եւ խնամի:

Ասեն ի փողոցս չի հրապարակի: Զինի եւ յերեսըն հրէից աղջի: Նեղին վշտանան յաղաղս սոյն իրի: Բողոքեն ի դուռս շատ բռնաւորի:

Աղաչեն բաղում եւ դրամքս տան: Պօստանձի պաշին առեալ հրաման: Յըզեալ զոմն ճարտար պէքի կոչական: Զի վաղմաղեցեն երթալ զհետ նոցայն:

Պէքի խոսէքին եւ գօրք ընդ նմայն: Եւ հրեայք ոմանք յերիվար հեծան: Փութաւուց ձիովք զհետ նոցա եղան: Իրբեւ յիջեանն յերկրորդումն իջան:

Գիշերն զերիվարսն նոցա զողացան: Ելին ընդ առաւօտն տեսեալ ափշեցան: Ըզրոյր գաւառն յուզեալ չըջեցան: Ըզձինս ոչ գտին զգործօղսն չիմացան:

Ո՞րք էին որ զգործըն զայն արարեալ: Կամ զպարաստութիւնս վաղուց հոգացեալ: Կամ թէ յերաւի զողոց զողացեալ: Կամ թէ չինկեանից որ անդ մերձ օթեալ:

Այս պակաս անուամբ ի յետըս դարձեալ: Եւ ամօթ զնոսայ յոյժ առաւելեալ: Եւ եւս զի անհաշտ խոնավութիւն ծնեալ: Առ ի մէջ հրէից եւ յունաց որդեալ:

Երգս նոր յարմարեալ ի փողոցս յուզեալ: Մեծաց եւ փոքունց զեղեղեալ ձայնեալ: Քան զսուտ նէպիին բանքն առաւելեալ: Զարմանք համայնից յունաց պարձան լեալ:

Նախատինք հրէից որդ յոյժեցան: Կատակեն զնոսա ալլազիք համայն: Զի զգործ Տիմոյին առնեն արտասան: Ըզսիրտ քաջութեան եւ սէր աղջկան:

Մեծամեծք փոքումք դու ի զարմացման: Վասն առնաւուտի սրտի մեծութեան: Զերկոցունց սիրոյն չլեզուն (?) լիութեան: Խորհրդոցն հնարուցն եւ պարաստութեան:

Զնան ի զիշերի պատրաստի կալման: Զերիվարսն ի յեղբ ծովուն ի զիւրման: Զաղջիկըն փոխեալ ի կերպս մանկան: Զփախուստն արագեալ եւ ի յաջողման:

Ըզգիպուած բախտին շնորհաւորական: Պահըն բարիօք եւ պատշաճական: Ժամըն զերազոյն օրն ուղղաղիպման: Խորհուրդքն խոհեմ ի սէր զուարթական:

Ի յԱստուած եղին զյոյսըն պնդական: ԶՅիսուս կոչէին իւրեանց օղնական: Ասին ախոյեան զիսաչըն տէրուենան: Ուղեկից բարի զհրեշտակս պահապան:

(Կարմրաւ): Վասն անգտանելոյ հրէից զմայր աղջկանն քէ խորհրդով քո կորաւ դուստրն քո: Իսկ նա զառնագին կոծով ողբայր ի մէջ քաղա- քիս անիծելով զառնաւուտն:

Ըզմայրքն հրեայք դատապարտէին: Թէ իրս որ եղեւ զիտութեամբ քոյին: Նաււ բողոքեր զխիղճս իւրոյ սրտին: Թէ զհուրս որ ունիմ բաւ է իմս սրտին:

Դուք այլ մի՛ խոցէք վշտուք սաստկաղին: Սպանէք դուք զիս հալալ արեւն իմ: Ո՞վ է որ զպտուղ իւրոյ արդանդին: Կորուսցէ այլոց ի յօտարութիւն:

Աչացս իմ հանդէպ զդուստր իմ խլեցին: Թէպէտ կենդանի որպէս մահ ցուցին: Ի տանէ իմոյ տարապիւր հանին: Սուգ ինձ պաշարեաց ցաւս անհրեարին:

Հաւատոցս հանին քրիստոնեայ առին: Նախատինք արար մէջ համայն աղջին: Պետութիւնք տաճկաց չէ որ զըտանին: Այլ յօտարն մէջ քրիստոնեան:

Ասին ի զրկէս զդուստր իմ ծաղկածին: Արին անդաւակ զմայրըս լալաղին: Զպտուղս ի ծառէս խակալութ հատին: Զյոյս իմ չիջուցին տանս խաւար ամին:

Կեանքս եղեւ այսօր մէջ աղջամղջին: Ոչ հանգիստ աւուր ոչ զիշերին: Այլ իմ տոչորիմ դստերս կարօտին: Տապիմ տաղնապիմ ի բաց կրակին:

Հայրքն զոր լրսէ զինչ տաց պատասխան: Ի յօտար աշխարհ եղիպտոսական: Զնախատինս կրքէ զայլ աղբաց համայն: Սակս մեր աշխատի դոյս ստացական:

Ունէաք փափաք թէ տացուք նըշան.  
Ըստ արժանոյ անուան հօրըն մեծութեան.  
Ըստ օրինի մերոյ խօսել հրէական.  
Ի պատշաճ ժամու սպասել հարսնութեան:

Միամօր դստերս իմ վայելչազան.  
Փեսայացընել զոմն արալի Մուսայն.  
Սպասէի խնդալ ի տեսրս նոցայն.  
Սակս մեր ժառանգորդ լինել յաւիտեան:

(Կարմրաւ):

Դառնայ եւ խօսի առ առնաւուստն այն.  
Ով ետ քեզ խրատ այր ամբարտաւան.  
Գող եւ հարամի աղղ ժպըրհական.  
Ի չխեցեր խըլել դուստր իմ պատուական:

Միթէ վասըն քո դաւակ հասուցի.  
Յղացեալ երկնեցայ ծնայ աշխարհի.  
Բազկօքըս բարձիւ զերկ զգուցի.  
Կաթամբ դիւցեալ խեղճի սնուցի:

Շողոյն փախուցեալ ցրտոյն ծածկեցի.  
Ի ջրոյն պատրաստեալ ի հրոյն պահեցի.  
Օտար ընտանեաց նազելի ցուցի.  
Միթէ քեզ համար դայն պատրաստեցի:

Դու զիս անդաւակ արեր աշխարհի.  
Անդաւակ լինի մայրդ ողորմելի.  
Ձարտասուս աչաց հեղեր ի յերկրի.  
Քո մօրն արտասուս ոչ դադարեսցի:

Ձինչ քեզ արժանի դուստր իմ նազելի.  
Ձինչ քեզ դարչելոյդ շաթուն պատշաճի.  
Նարըն եւ նազուքս քեզ անպիտանի.  
Ճելալիդ Տիմօ ժալըմ առնաւուստ:

Յոր յաղգէ էիր այրդ անիծելի.  
Յոր երկրէ եկիր դու նազելի (նղովելի?).  
Որ չարեաց ծնունդ ծնող քո եղկելի.  
Ով Բէլ չարաթուն ժալըմ առնաւուստ:

Դու նինուէացի եւ բարեւացի.  
Կորուստ վատնեցեր զիսուս իմ ի յերկրի.  
Ի բնէ թշնամիդ մերս Իսրայելի.  
Մամթէր ամալէկ ժալըմ առնաւուստ:

Դու ինձ Եդիպտեայ փարաւոն եղեր.  
Ձանդրանիկ դուստր իմ տարադիր հաներ.  
Միայն զմիամօրս միթարս հատեր,  
Մէլլուն ֆարաօն ժալըմ:

Դու Անտիոքոս տանց իմոց եղեր.  
Ձինդութիւնըս մեր ի սուգ փոխեցեր.  
Նախատինք յաւէտ աղղիս մեր թողեր.  
Ա՛ Անդիօնոս ժալըմ:

Դու ինձ Թամուրլանի ճէլալի եղեր.  
Եադի եւ թաթար եւ դայլ մարդակեր.  
Ձիմ դուստրս ի ծոցոյս յանկարծ խըլեցեր.  
Ա՛ շունի փէոօ՝ ժալըմ:

Դու Իստամպուլու հուր նըմանեցեր.  
Յաղգէ յաղղ սրտիս կրակ վառեցեր.  
Յաւիտեան հողոյս կսկիծ դիպեցեր.  
Ա՛ տիալօլուս ժալըմ առնաւուստ:

Դու ժանդ եւ ժպիրհ աղղ եւ դարչելի.  
Ձինչ քեզ միարան Իսրայելացի.  
Դու անխտոն ընդ մեզ պիղծ ու մարացի.  
Շամոնի քրիստիան ժալըմ:

Դու եւ անօրէն եւ չարեաց որդի.  
Կեղտոս ճիկէրճի եւ պիղծ ալաղդի.  
Ծանակ առնաւուստ տըմարդ եսպանի.  
Էնիէրէմատօ ժալըմ:

Դու դարչատեսիլ վատ քան զղալմուխի.  
Սըղըթմաճ չօպան տըրաղ զէպանի.  
Պատառող դաղան դեղող անճոռնի.  
Դղեցիր զդուստր իմ ժալըմ:

Երկաթ քեզ լայիս ուր ի վիղղ անցնի.  
Շղթայ քո զոտօքը ընդ փայլանսն դերի.  
Դեւ պէխէր պօշնաղ ու տօպրուճալի.  
Անսուրբ Լանթիփատ ժալըմ:

Վայ ինձ դստիկ իմ քաղցրիկ ու չիբին.  
Ասուն ու խօսուն ձագուկ իմ նարին.  
Որսացող աղուաք խլեալ դեղ տարին.  
Շան բաթին լինիս ժալըմ առնաւուստ:

(Կարմրաւ): Վասն երբալոյ մօրն յետրէմէ տայ  
աքիզուիալ քաղաւորին, եւ կարծեցեալ վամառա-  
կանսն կապաճօ տարան յետրէմէ: Եւ ի չգտանել  
վկայից, անմխիթար լեալ մեռաւ մայրըն աղջկանն  
անդ:

Լայր եւ լացընէր նոր այս ողբերգօք.  
Աղջկօք եւ հարսնօք լալական պառաւօք.  
Շողոտ ու ժանկոտ կախարդ շնծերօք.  
Անիծեն զդուստրն եւ դայն առնաւուստ:

Շնծեր պիղծ պառաւօ մօրըն խրատ տան.  
Երթ ի յետրէնէ արդ տուր ի յարջայն.  
Ժողուճ տուր կանչէ լաց Էդիր լալկան.  
Մի թէ մատնեցես զտանողըն ի յատեան:

Գնաց յետրէնէ մայրըն աղջկան.  
Երեւտ աղղուհալ ողորմ ողբական.  
Ասաց թաղաւորն տեսցէ դայմախամն.  
Ձով կամի քէբան եղեւ նոյն հրաման:

Ձոմն վաճառականն յետրէնէ տարին.  
Մատուցին հանդէպ մեծ դայմախամին.  
Կանգնեցաւ ի դաւ խիստ կինըն ջհտին.  
Ասէ զիմ աղջիկն սօքա կորուսին:

Ասէ դայմախամն ուր է քո վկայն.  
Ձի չեմ ընդունիր ըզհրեայ վկայն.  
Որ աղղօք եղեալ էք խիստ դաւաճան.  
Հաստատուն տաճիկ կամիմ զվկայն:

Երբ չգտին վկայ յամօթի հարան.  
Հսոտմ պաղըրկեանքն ըզրողդք կալան.  
Եթէ յիստամպուլ այլ վաճառական.  
Սաղկս Բուխտանից մուտ Էլ չկարենան:

Սիրտք բոնակալից յայսմիկ հաճեցան.  
Ոմըն հայցուածովք ոմն տինարական.  
Կոչեալ դայմախամն ընոյն պաղըրկեանք.  
Հօճէթ դրեալ վասն այնց անմեղ ի նոյն բան:

Լսողքն ամենայն յայսմ եղեն հաւան.  
Եղջիւր քրիստիանց առ այս բարձրացան.  
Ձկէլտի կէլտիին զվրէժն առան.  
Անտուուտք ցնոսայ յարաժամ ցնճան:

«Այլ ի դուրս չեղաւ մայրըն աղջրկանն.  
Եւ ոչ ի յերես բոնակալացն այն.  
Ծախեալ զստացուածս եւ զինչ իւրոյ տան.  
Ձկէլտ ի քաղաքս միւս եւս անդամ:

Նոյն տապով տապէր ի խոր կսկծման.  
Վայ եւ եղուկ տայր անձինն անխափան.  
Նոյն ցաւօք հեծէր ողորմ ողբական.  
Յետ ոչ շատ աւուրց մեռաւ խրդճական:

Երանի սէֆա թէ օկտիք ինչ բան.  
Բոտեալ ինչ յախորժ ի խրախճանութեան.  
Եմ միշտ ի մաղթանս յիշել զիս տարամ.  
Մաղթանաց ըղձի սակի դրեւս այսքան:

Ի չնորհս Յիսուսի լինել աւրհնարան.  
Արժանաւորիլ իւրոյ տեսութեան.  
Յարքայականին փառաց իւր յագման.  
Ի կեանս անդրաւ ընդ ձեօք միարան:

Վերջին ութը տողերուն սկզբնատառե-  
րը կը կապեն ԵՐԵՄԻԱՅԻ, որ անտարա-  
կոյս Քէօմիւրճեանն իսկ է:

\* \* \*

Իմ այս նոյն թիւ 44 գրչադիր ժողովա-  
ծուիս մէջ, անտարակոյս դարձեալ Երե-  
միա Ձէլէպիի գրչէն կայ նաեւ ընդարձակ  
(կարմրաւ) «Պատմութիւն Փարէզ ման-  
կանն եւ Վենայու. դստերն Դօլմի իշխա-  
նին. զոր թարգմանեալ ի Ֆրանզ լեղուէ  
ի հայի. ի ձեռն տէր Յովանէս Տէրղըն-  
ցոյ. եւ իւր որդւոյն Պաչատուրին. ի քա-  
ղաքն Ֆուսնճոց, կոչեցեալն Մառչիլիա»:

(Վերջ)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ